



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԴՊՐԵՎԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

093 93 11 85

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Դպրեվանք

« 28 » դեկտեմբերի 2016 թ.

թիվ 25

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆԻ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Դպրեվանք համայնքի

ափագանու 23 դեկտեմբերի 2016թ. թիվ 9 արձանագրության

N 21 որոշումը՝ կից փաստաթղթերի

Համայնքի ղեկավար



Ա. Կասարով

ՍԻՔ
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտնի
աշխատակազմի գլխավոր տնօրենի
ժամ ղեկավարի պաշտոնը
23 12 2016
Մուտք № 7/9462-16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԴՊՐԵՎԱՆԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Դպրեվանք համայնք

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2016 թվականի N 21

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
2-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դպրեվանք համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը :

ԿՈՂՄ-4

ԴԵՄ 0

ՁԵՌՆՊԱՀ 0

1. Ռ. Կադասիև
2. Ս. Դավիդով
3. Դ. Կադասիև
4. Հ. Թովմասյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ



Ա. ԿԱՍԱԲՈՎ

2016 թ. Դեկտեմբերի 23-ին
գ. Դպրեվանք

ՀԱՄԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԴՊՐԵՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Դպրեվանք համայնքի
գարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական
մարմնի » կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արամայիս Կասարովի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 23.12.2016թ. թիվ 21 որոշմամբ

ԴՊՐԵՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ 2016թ.



Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	Error! Bookmark not defined.
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	6
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	8
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	8
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	10
3.1. Համայնքի զարգացման տեսլական	10
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	10
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	11
5. ՀՀԶԾ մոնիթորինգ	12

• 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի ընթերցող՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արագածոտն մարզի Դպրեվանք համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը մշակվել է հիմք ընդունելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով սահմանված լիազորությունները և իրավասությունները :

ՀՀԶԾ մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել համայնքի ֆինանսական կարողությունը, համայնքում առկա զարգացման դրական միտումները, ինչպես նաև համայնքում առկա խնդիրները և վտանգները:

Մեր նպատակն է համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման կենտրոն, համայնքում զարգացնել անասնապահությունը՝ տարեցտարի ավելացնելով անասնազխաքանակը, կաթի և մսի քանակի և որակի բարձրացումը, զարգացնել այգեգործությունը և պտղաբուծությունը՝ ստեղծելով նախադրյալներ ավելի մեծ թվով շահառուների ընդգրկել նշված ոլորտներում: Համայնքում առկա են համապատասխան նախադրյալներ պտղի չորանոցներ զարգացնելու :

Միաժամանակ համայնքի զարգացման և առաջընթացի համար գերակա խնդիր է հանդիսանում նաև ոռոգման համակարգի և ջրի անբավարար վիճակը, որի արդյունքում չեն մշակվում գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ կամ մշակվում են ոչ լիարժեք:

Հիմնական խնդիրներից կարելի է նշել նաև արտադրված ապրանքի սպառման խնդիրը, որը կապված է համայնքը մայրուղուց հեռու գտնվելու և պահանջարկի բացակայությամբ :

Համայնքի զարգացման համար խոչընդոտ է նաև համայնքի ոչ գազաֆիկացված լինելը՝ իր հետ բերելով նոր խնդիրներ:

Վերը նշված խնդիրների արդյունքում խոչընդոտներ են առաջանում համայնքի սոցիալ - տնտեսական վիճակի բարելավմանը, բնակչության բնական աճի, մշակութային կյանքի զարգացման հարցերում:

Հաշվի առնելով այն փաստը, որ համայնքը փոքր է իր բնակչությամբ և ֆինանսական կարողություններով, որի արդյունքում համայնքը իր միջոցներով ի վիճակի չէ իրականացնել իրեն վերապահված լիազորությունները ամբողջ ծավալով, որի պատճառով համայնքի զարգացման նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համախմբվածություն, հետևողականություն, ֆինանսական և ռեսուրսային միջոցների ճիշտ և արդյունավետ օգտագործում՝ ինչն էլ կհանգեցնի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական և մշակութային պայմանների բարելավմանը :

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել, որպեսզի այն համահունչ լինի ՀՀ տազմավարական, մարզային և տարածաշրջանային գործողության մեջ դրված զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և առանձին կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնումով՝ ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցությամբ, դրանց լուծումներին հասնելու համար:

Դպրեվանք համայնքի ղեկավար Ա. Կասարով

2, Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն


Դպրեվանք համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևմուտք, մայրաքաղաքից 45 կմ. բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է՝ 1200 մ և վարչական տարածքը կազմում է 31,76 հա; Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Արուճ, Շամիրամ և Կոշ գյուղակա համայնքներին; Դպրեվանք համայնքը հիմնադրվել է 1990-ական թվականներին; Գյուղի բնակիչները հիմնականում նախկին Ադերբեջանի տարածքի Շամախի շրջանի Մատրասա գյուղից են կան հանրապետության տարբեր շրջաններից տեղափոխված բնակիչներ;

1991թ. Հանրապետությունում իրականացված հողերի սեփականաշնորհմանը մասնակցել են համայքի տնային տնտեսությունների մի մասը; Համայքի սեփականաշնորհված հողերը գտնվում են Շամիրամ համայքի հաշվեկշռում;

Ըստ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի՝ Դպրեվանք համայքի մշտական բնակչությունը 92 մարդ էր, իսկ 2016թ հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչությունը կազմում է 80 մարդ, որից 80 ազգությամբ հայ,

Բնակչությունը ըստ սեռա-տարիքային կազմի՝

- Մինչև 6 տարեկան 4 մարդ.՝ որից 1 իգական. 3 արական
- 7-ից մինչև 18 տարեկան.....15 մարդ՝ որից 4 իգական. 11 արական
- 19-ից մինչև 63 տարեկան.....35 մարդ՝ որից 20 իգական. 15 արական
- 63 և ավելի տարիքի.....26 մարդ՝ որից 11 իգական. 15 արական



Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:


:

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը


- Դպրեվանք համայնքի ընդհանուր փարեկան բյուջեն կազմում է 3683,0 հազ դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտներ կազմում են 183,0 հազ դրամ, կամ ընդհանուր փարեկան եկամուտների 5%
- Համայնքի փարածքում արդյունաբերական ձեռնարկությունները չկան:
- համայնքի բնակիչները հիմնական զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
Մասնատրապես՝

Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությամբ
խաղողի և այլ պտղղների արտադրությամբ


Մանդղակ 2



Մանդղակ 3



Մանդղակ 4



- ընդհանուր նպատակների համակարգում գրանցված ընդհանրների թիվը 2016թ-ի համար կազմել է 2 ընդհանիր,
- գործազրկության մակարդակ համայնքում կազմում է 20%:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

2017թ.-----2021թ.

. Համայնքում փողոցների լուսավորություն, հենասյուններ կան հարկավոր կատարել մյուս աշխատանքներ

. Խմելաջրագծերի վերանորոգում ընդհանուր համայնքի խմելաջրագծի երկարությունը կազմում է 2կմ.160մ.որից 500մ. Վերանորոգվել է

.Պտղի և բանջարեղենի չորանոցի շենքի վերանորոգում

2005թ.Դպրեվանք համայնքում կառուցվել է պտղի և բանջարեղենի չորանոց շահագործման չի հանցնվել, մակերեսը կազմում է 0,3հա. Տարածք; Վերանորոգումից հետո կնդունի մոտակա համայնքներից պտուղ և բանջարեղեն; Կստեղծվեն նոր աշխատեղեր;

- *հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման ,պահպանման և բարելավվման ընդհանուր աշխատանքներ:*
- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի տրամադրում՝ գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
- *միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակընկալում է ոռոգման համակարգի վերանորոգում և բարելավվում մշակույթի տան շենքերի կառուցում :Նշված հարցերի կարգավորման հետ միասին կբարձրանա և համայնքի սոցիալական վիճակը*

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),

Դպրեվանք գյուղական համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է եկամուտների հետևյալ

բյուջետային կառուցվածքը:

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Հողի հարկ	111,9	120,0	120,0	122,0	130,0
Գույքահարկ	85,3	100,0	150,0	170,0	200,0
Գույքի վարձավճար	58,0	58,0	70,0	70,0	100,0
Համահարթ. դոտացիա	3577,6	3800,0	3800,0	3850,0	3900,0
Մնացորդ	1000,0	---	---	---	---
Այլ դոտացիա	---	50,0	100,0	---	---
Ընդամեն	4833,8	4128.0	4240.0	4212.0	4330.0

Դպրեվանք գյուղական համայնքի կողմից 2017-2021թթ-ի համար նախատեսվել է հետևյալ բյուջետային ծախսային ուղղությունները

Անվանումը	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
Ապա, պահպ, ծախսեր	3663.8	3698.0	3740.01	3692.0	3710.0
Սոց.ապահովություն	120.0	150.0	200,0	200,0	300,0
Փողոցների լուսավորություն	1000.0	200,0	200,0	200,0	200,0
Կոմունալ ծառայություն	50.0	80.0	100,0	120,0	120,0
Ընդամենը	4833.8	4128.0	4240.0	4212.0	4330.0

2.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- Համայնքի ուժեղ կողմեր՝
 1. Աշխատուժի առկայություն
 2. Համայնքի աշխարհագրական լավ դիրքը, մոտիկությունը մարզկենտրոնին և մայրաքաղաքին
 3. Հողերի բերրիություն
 4. Անասնապահության զարգացման հնարավորություն՝
 5. Մեղվաբուծության զարգացման հնարավորություն
 6. Համայնքի բնակիչների համախմբվածությունը

- Համայնքի թույլ կողմեր՝

1. Ոռոգման ջրի անբավարար վիճակը
2. Համայնքի ոչ գազաֆիկացված լինելը
3. Գյուղապետարանի շենքի և համայնքային շենքի բացակայությունը
4. Համայնքի անապահով ընտանիքների թիվը
5. Գյուղապետարանի տնտեսական տեխնիկայի պակաս
6. Սպորտի և ժամանցային կենտրոնների բացակայությունը
7. Գյուղապետարանի հողերի մշակման ոչ բավարար վիճակը
8. Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը
9. Խմելաջրի ոչ բավարար վիճակը
10. Զրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը

- Հնարավորություններ՝

1. Գյուղապետարանի մթերքների արտադրանք
2. Պտուղի չորացման արտադրամաս՝ շենքի առկայությունը
3. Արտադրանքի առկայության դեպքում աշխատուժի բավարար քանակ
4. Զերմոցային համակարգի հիմնում
5. Կուլտուրայի տան և գյուղապետարանի շենքերի կառուցումն ու շահագործումը մեծապես կնպաստի համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների հետ նպաստակային աշխատանքների կազմակերպմանը և իրականացմանը, երեխաներին արտադպրոցական դաստիարակության խմբակներում ներգրավմանը

- Սպառնալիքներ՝

1. Խմելաջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պարճառով համայնքում սուր վարաքիչ հիվանդությունների առաջացման վտանգ
2. Քամիներ
3. Կարկուտ
4. Տրտահարություններ
5. Տնական երաշտներ
6. Ոռոգման ջրի բացակայությունը վտանգում է համայնքում հողագործությամբ զբաղվելուն, որը նպաստում է գյուղատնտեսության ոչ ինտենսիվ զարգացմանը ինչն էլ նպաստում է երիտասարդների արտագաղթին, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությանը:

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման փարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող: Դպրեվանք համայնքի ՀՀԶԾ-ի իրականացման արդյունքում, առաջիկա հինգ տարիների ընթացքում կբարելավվի համայնքի բնակիչների սոցիալ – տնտեսական վիճակը, բնակչությունը կունենա իր ներդրումը ինչպես համայնքի զարգացման համար, այնպես էլ խթան կհանդիսանա պետության առաջընթացի համար, կբարձրանա բնակչության կուլտուր – կենցաղային պայմանները, արդյունքում բնակչությունը կմասնակցի համայնքի մշակութային կյանքի զարգացմանը, ինչպես նաև նախատեսված ծրագրերի օգնությամբ բնակիչը ավելի շատ կկապվի հայրենի հողի հետ և կշենացնի հայրենի օջախները:

Ելնելով Դպրեվանք համայնքի աշխարհագրական դիրքից, հողերի կարգավիճակից կարելի է համայնքի առաջնահերթ զարգացման ուղղությունը համարել գյուղատնտեսությունը՝ փարեցփար ավելացնել անասնազվխաքանակը և բանջար- բուստանային կուլտուրանների արտադրման ծավալները: Միջոցներ ձեռնարկել համայնքում վերականգնել այգեգործությունը և պողպատաբուծությունը: Համայնքում 2003թվականին կառուցել են պողի չորանոցի արտադրամաս, որը շահագործման չի հանձնվել, անհրաժեշտ է մասնակի վերանորոգում գործնեություն ծավալելու համար:

Սահմանել համայնքի կայուն զարգացման ցուցանիշները և դրանց թիրախային արժեքները հինգ տարիների համար: Պարտադիր ցուցանիշներն են՝

- Դպրեվանք համայնքի աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կազմում է 20 փոկոս, ինչը կապված է ոռոգման ջրի և աշխատատեղերի բացակայության հետ: Նշված խնդիրների կարգավորման ընթացքում այն կարող է նվազել՝ հասնելով մինչև 10 փոկոս:
- Համայնքի սեփական եկամուտների փարեկան աճը զարգացման ցուցանիշների արդյունքում կկազմի 1.2 փոկոս:
- Համայնքում գրանցված բնակիչների թիվը չպայմանավորված բնական աճով՝ նախորդ փարվա համեմատ, կազմում է 0 փոկոս: Սակայն կարելի է վստահ ասել, որ համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման արդյունքում փվյալ ցուցանիշը կբարձրանա:
- Առաջիկա տարիների ընթացքում կավելանա նաև անասնազվխաքանակը՝ կապված խնդիրների կարգավորման արդյունավետությունից, խոփարքների և արոտավայրերի նպատակային օգտագործումից:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքում միջոցներ ձեռնարկել զարգացնելու այգեգործությունը և պտղաբուծությունը՝ հաշվի առնելով գյուղատնտեսական հողերի առկայությունը :
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ խմելու ջրի ջրամատակարարման և ոռոգման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

Համայնքում նպատակադրված խրազրերի իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցները՝

- Համայնքի սեփական եկամուտներ,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Բարեգործություն/նվիրաբերություն,
- Պեդություն-համայնք-մասնավոր հարված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ,
- Այլ աղբյուրներ:

Փողոցների լուսավորության համար առկա է համայնքի սեփական միջոցներով իրականացնելու հնարավորություն, իսկ չորանոցի վերագործարկման համար չկա առկա միջոցներ:

5. ՀՀԶԾ մոնիթորինգ

- ՀՀԶԾ –ում ընդգրկված ծրագրերի մի մասը հնարավոր է իրականացնել համայնքի միջոցներով,իսկ մնացած մասը իրականացնելու համար անհրաժեշտ է ներդրումներ:
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն,
- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ,
- Այլ աղբյուրներ:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Փողոցների լուսավորություն (Ծրագրի անվանում)

Հազ. դրամ

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Փողոցների և բանջարեղենի ընդունում և վերամշակում լուսավորություն						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			1000	200	200	200	200
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			500	100	100	100	100
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		500	100	100	100	100	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 800 Կապիտալ ծախսեր 1000 Ընդհանուր բյուջեն 1800						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	գույք						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Համայնքի բյուջե						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.03.2017թ.--31.12.2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Առկա են հենայինները , բացակայում են օժանդակ սարքավորումները						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Պտղի և բանջարեղենի չորանոցի վերանորոգում
(Ծրագրի անվանում)

Հազ. դրամ

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Պտղի և բանջարեղենի ընդունում և վերամշակում						
Ծրագրի անմիջական նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			4000,0	1000,0			
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			2000,0	500,0			
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		2000,0	500,0				
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝1000,0 Կապիտալ ծախսեր4000,0 Ընդհանուր բյուջեն5000,0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	գույք						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինասական միջոցների բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ և մոտակա համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.03,2017թ.--01.06,2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բացակայում են ապակիներ և գույք						

Պատրաստվել է համայնքի 24
